

# ՍԱՂՄՈՍ 43

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ազատության աղոթք <u>MT ներածություն չունի</u> Սաղմոս 42-ի շարունակություն	Ներության Ժամանակ աղոթք Աստծուն	Ուխտագնացության համար պատրաստվելու բժշկության աղոթք	Գերության մեջ գտնվողի աղոթք	Գերության մեջ Ղևտացու ողբ
43:1-2	43:1-2	43:1-2	43:1-2	43:1 43:2
43:3-4	43:3-4	43:3-4	43:3-4	43:3 43:4
43:5	43:5	43:5	43:5	43:4 43:5

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<p><b>NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 43:1-2</b></p> <p><sup>1</sup>Դատի՛ր ինձ, ո՛վ Աստված, ու պաշտպանի՛ր իրավունքս անաստված ազգից . Օ՛, փրկի՛ր ինձ նենգավոր ու անարդար մարդուց, <sup>2</sup>Քանի որ Դու ես իմ զորության Աստվածը: Ինչո՞ւ ես դեմ գցում ինձ, ինչո՞ւ սզավորի պես շրջեմ՝ Թշնամուս հալածանքի պատճառով:</p>
--

43:1 Քանի որ՝

1. Սաղմ. 42:5 և 11-ում կրկներգը, որը ի հայտ է գալիս Սաղմ. 43:5-ում,

2. MT-ն չունի ներածական մաս Սաղմոս 43-ում (Գիրք 2-ում միակ Սաղմոսն առանց ներածության)

ապա, հավանական է, որ սա եղել է Սաղմոս 42-ի մի մասը ինչ-որ ժամանակ, սակայն բաժանվել է անհայտ պատճառներով: Մերտողության Հրեական Աստվածաշունչը իր լուսանցքում տալիս է (Էջ՝ 1330), որ այն փաստը, որ Սաղմոս 42 կենտրոնանում է անցյալի վրա, մինչդեռ Սաղմոս 43՝ ապագայի վրա, սա կարող է ակնարկ հանդիսանալ, թե ինչու և որտեղ են դրանք առանձնացվել:

❖ **«դատիր»** Այս ԲԱՅԸ (BDB 1047, KB 1622, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 7:8, 26:1, 35:24) հիմնականում նշանակում է «դատել»: Սաղմոսերգուն օգտագործում է դատական լեզու (տես՝ Սաղմ. 17:1-3): ՅԱՀՎԵՆ ամբողջ մարդկության գործերի արդար և ազնիվ դատավորն է (այսինքն՝ Սաղմ. 9:4):

❖ **«պաշտպանիր իրավունքս»** Սա նույնպես դատական փոխաբերություն է (BDB 936, KB 1224, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): ՅԱՀՎԵՆ միակ ազնիվ և անաչառ դատավորն է: Այս նույն հզոր դատական տեսարանը գտնվում է Հռոմեացիների 8:31-39-ում:

❖ **«անաստված ազգից»** Եթե սա ճիշտ է, ապա Սաղմոս 42 և 43-ը սկզբնապես եղել է մի Սաղմոս և Սաղմ. 42:6 նշանակում է, որ հեղինակը գերության մեջ է, ապա «անաստված ազգը» հավանաբար վերաբերում է Սիրիային:

Չարմանալի է, որ հաջորդ տողը գործածում է այս բնութագրական արտահայտությունը, «նենգավոր և անարդար մարդ»: Կարծում եմ այստեղ մենք ակնկալելու էինք ՀՈԳՆԱԿԻ թիվ և մի նկարագրություն, որը կենտրոնանում է կռապաշտության կամ ագրեսիա վրա:

**43:2** Կյանքը դժվար է, անարդար, իսկ խնդիրները անսպասելի են գալիս: Մենք բոլորս էլ զարմանում ենք, թե ինչու:

1. արդյո՞ք վիրավորել եմ Աստծուն
2. արդյո՞ք խախտել եմ Աստծո օրենքը
3. արդյո՞ք սա մեղքի կամ չար դեպքերի և մարդկանց հետ կապված դիպվածների դատաստան է:

Սաղմոսերգուն հարցնում է. «Ինչո՞ւ» (Սաղմ. 43:2), ինչպես և ամբողջ մարդկությունն է հարցնում:

Հիշե՛ք, որ սա ՀԿ-յան Իմաստասիրական Գրականություն է, որը ՀՄԱ-ում քաջ հայտնի ժանր էր: Այն անդրադառնում է բոլոր մարդկության հարցերին: Իսրայելի համար հարցերը առնչվում էին ՅԱՀՎԵՆ և Մովսեսի միջոցով Նրա հայտնություններին: ՀԿ-ը չի պատասխանում բոլոր հարցերին այն նույն կերպով ինչպես ՆԿ-ը: Կա տարբերություն՝

1. պրոգրեսիվ հայտնության
2. նոր ուխտի
3. չարի առեղծվածի միջև:

❖ **«գորության Աստվածը»** Սա պարբերաբար կրկնվող կրկներգ է (BDB 731, այսինքն՝ ապահովության կամ պաշտպանության վայր, հաճախ թարգմանվում է «ապաստան», տես՝ Սաղմ. 27:1, 28:7-8, 31:2,4, 37:39, 52:7, Ես. 17:10, 25:4, 27:5, Երեմ. 16:19): Հավատարիմ հետևորդները կարող են միշտ իմանալ, որ ՅԱՀՎԵՆ է նրանց հույսը, պաշտպանությունը և ապահովության հանգրվանը այս մեղավոր աշխարհում՝ խնդիրների և նեղությունների մեջ: Սակայն այս խաղաղությունը պետք է ընդունել: Հավատքի քայլն ու աշխարհայացքն է, որ կապ չունեն այս ներկա իրականության պտտվող հորձանուտի հետ:

❖ **«ինչո՞ւ սգավորի պես շրջեմ՝ թշնամուս հալածանքի պատճառով»** Սա շատ նման է Սաղմ. 42:9-ին:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 43:3-4**

**<sup>3</sup>Ուղարկի՛ր Քո լույսն ու ճշմարտությունը, դրանք թող առաջնորդեն ինձ.**

**Թող ինձ տանեն Քո սուրբ լեռն ու Քո բնակարանները:**

**4 Այն ժամանակ կգնամ Աստծո զոհասեղանի մոտ՝  
Իմ ուրախության ու ցնծության Աստծո առջև:  
Քեզ տավղով եմ փառաբանելու, ո՛վ Աստված, ի՛նչ Աստված:**

**43:3** «ուղարկի՛ր» Այս ԲԱՅԸ (BDB 1018, KB 1511, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) աղոթքի խնդրանք է, որը անձնավորում է ՅԱՀՎԵԻ՝

1. լույսը – BDB 21  
ա. որպես ՅԱՀՎԵԻ բարեհաճություն՝ Սաղմ. 4:6, 44:3  
բ. որպես ուղեցույց՝ Միքիա 7:8  
գ. որպես էսկատոլոգիական լույս՝ Եսայի 9:2 (Հիսուսի առաջին գալուստը), Եսայի 60:19-20 (Հիսուսի երկրորդ գալուստը)
2. ճշմարտություն – BDB 54 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. Հավատալ, վստահել, հավատք և հավատարմություն ՀԿ-ում)  
ա. ՅԱՀՎԵԻ առանձնահատկություններից մեկը, որը հաճախ թարգմանվում է որպես «հավատարմություն»՝ Սաղմ. 40:10, 71:22, 115:1, 138:2  
բ. հաճախ անձնավորվում է որպես ՅԱՀՎԵԻ պատգամաբերներ՝ Սաղմ. 40:11, 43:3, 57:3, 85:10, 89:14

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչ պետք է անեն «լույսը» և «ճշմարտությունը»:

1. թող ինձ առաջնորդեն – BDB 634, KB 685, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. թող ինձ տանեն Քո սուրբ լեռը – BDB 97, KB 112, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով

❖ «սուրբ լեռ/բլուր» Սա Երուսաղեմում Մորիա լեռան վրա տաճարին նկատի ունենալու շատ կերպերից մեկն է: Այն նաև կոչվում է (սովորաբար «սուրբ» ԱԾԱԿԱՆՈՎ)

1. Միոն
2. տուն
3. սրբարան
4. բնակատեղի
5. տաճար
6. լեռ
7. Աստծո քաղաք

Այստեղ այն համազոր է հանդիսանում «Քո բնակության վայրերը» խոսքին (տես՝ Սաղմ. 46:4, 84:1): ՀՈԳՆԱԿԻՆ արտահայտում է տաճարի համալիրի բոլոր կառույցները կամ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ (տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 1132):

**43:4** Սաղմոսերգուն ցանկանում է գնալ (BDB 97, KB 112, *Qal* ԸԴՁԱԿԱՆ) տաճարը և փառաբանել (BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸԴՁԱԿԱՆ իմաստով) Աստծուն իր տավղով (BDB 490, այսինքն՝ լարային գործիքով, տես՝ Սաղմ. 33:2):

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱԳՄՈՍ 43:5**

**5 Ինչո՞ւ ես վհատված, ո՛վ անձս,  
Եվ ինչո՞ւ ես իմ ներսում անհանգիստ:  
Հուսա՛ Աստծուն, քանի որ դարձյալ գովելու եմ Նրան .  
Ով իմ երեսի փրկությունն ու իմ Աստվածն է:**

**43:5** Սա Սաղմոս 42:5, 11 կրկներգն է: Ահա թե ինչն է միավորում այս երկու սաղմոսները:

**ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ՝** տես Սաղմոս 42 ցանկը: Երկու սաղմոսները գրական մեկ բաժին են: